



Չոն Մյուիր միջանկյալ դպրոց
Կորոնավիրուսի անվտանգության գործընթացներ
աշակերտների և նրանց ընտանիքների համար

Դպրոց մուտք գործելը և ելքը

- Դպրոց ժամանելիս, աշակերտները և աշխատակազմը պետք է դիմակ կրի և պահպանի ֆիզիկական հեռավորության կանոնները:
- Խնդրում ենք ծնողներին, երեխաներին դպրոց բերել առաջին դասի սկսվելուց 10 րոպե առաջ և ոչ ավելի շուտ:
- Աշակերտները պետք է դպրոց մտնեն նախապես նշանակված դարբասից, որպեսզի նրանց միայն 25%-ը դուրս գա նույն դարբասից և նվազեցնի շփումը մյուս աշակերտների հետ:
- Դպրոցի մուտքի դռները կբացվեն առաջին դասը սկսվելուց 10 րոպե առաջ:
- Դասերը սկսվելուց 10 րոպեից ավելի շուտ եկող երեխաները պետք է դպրոց մտնեն Բեթանի փողոցի դարբասից և վերահսկիչի հետ միասին սպասեն վոլեյբոլի դաշտում՝ իրարից ֆիզիկական հեռավորություն պահպանելով:
- Դասերն ավարտվելուց անմիջապես հետո, աշակերտները, 5 րոպեի ընթացքում, պետք է դուրս գան իրենց ամենամոտ գտնվող դարբասից:

Ջերմության չափում

- Ամեն օր, դպրոց ժամանելուց առաջ, աշխատակիցները կչափեն իրենց ջերմությունը:
- Դպրոց մտնելուց առաջ, մենք կչափենք աշակերտների ջերմությունը: Եթե երեխայի ջերմությունը 100.4° Ֆերինհայթ է կամ ավելի բարձր, ապա երեխայի ջերմությունը ևս մեկ անգամ կչափվի բուժքրոջ գրասենյակում՝ հաստատ համոզվելու համար, որ այն է նորմալից բարձր: Եթե 2 անգամ չափելուց հետո, հաստատվի, որ ջերմությունը 100.4° Ֆերինհայթից բարձր է, ապա ծնողը պետք է անմիջապես տուն տարի երեխային:

Դիմակներ և երեսը ծածկող հարմարանքներ

- Դպրոցում եղած ժամանակ, պետք է միշտ դիմակ կամ երեսը ծածկող հարմարանք կրել, որը կծածկի քիթն ու բերանը:
- Խորհուրդ ենք տալիս աշակերտներին բերել իրենց դիմակները, բայց այն չունենալու կորցնելու կամ աղտոտվելու դեպքում կտրվի նորը:
- Դիմակ կրելու օրենքներին չենթարկվող աշակերտները կուղարկվեն ադմինիստրատորի մոտ:

Դասասենյակներ

- Աշակերտները կնստեն իրարից 6 ոտքաչափ հեռու դրված նստարաններին կամ եթե այն հնարավոր չէ, ապա նստարանները իրարից կբաժանվեն միջնորմով:
- Աշակերտները կնստեն մեկ ու մեջ տեղադրված նստարաններին: Աշակերտների հաջորդ խումբը կնստի չօգտագործված նստարանների վրա, որոնք ազատ էին մնացել անցած դասի ընթացքում:
- Նստարանները կախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո:
- Հարատև շփման մակերեսները, որոնցից են դռան բռնակներն ու լույսի անջատիչները, կանոնավոր կերպով կմաքրվեն աշխատակիցների կողմից:
- Յուրաքանչյուր դասասենյակում տեղադրված կլին ձեռքերի ախտահանիչ նյութի մի մեծ շիշ:

Ֆիզիկական հեռավորություն

- Դպրոցում գտնվելիս, աշակերտները պետք է 6 ոտքաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանեն, եթե հնարավոր է:

- Դասասենյակի դրսում, ուսուցչին սպասելիս, նրանք պետք է կանգնեն գետնի վրա նշված շրջանակների վրա՝ ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար:

Դպրոցում շարժվելը

- Դպրոցում կպահպանվի միակողմանի երթևեկություն: Միջանցքներում և աստիճանների վրա, երեխաները պետք է նույն ուղղությունով շարժվեն, որպեսզի չկարողանան երես առ երես բախվել մեկը մյուսին:
- Միակողմանի երթևեկության նշանները տեղադրված են գետնին, պլակատների և ցուցանակների միջոցով:
- Դպրոցի աշխատակազմն անընդհատ կհիշեցնի աշակերտներին, թե ինչպես շարժվել դպրոցում և պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Դպրոցի շրջակայքում տեղադրված են ձեռքերի ախտահանիչ կետեր:
- Խմելու ջրի ծորակները միայն շշի մեջ ջուր լցնելու համար են: Աշակերտները չեն կարող անմիջապես ծորակից ջուր խմել: Նրանք պետք է ջրի շիշ բերեն իրենց հետ ամեն օր:

Ձուգարաններ

- Ձուգարանների տարողությունը կախված կլինի նրա մեծությունից: Յուրաքանչյուր զուգարանի դռան մոտ վերահսկիչը կհսկի թե միաժամանակ քանի աշակերտ է օգտվում զուգարանից:
- Աշակերտները չեն կարող օգտվել զուգարանից դասերի միջև ընկած ժամանակ, որպեսզի կարողանանք վերահսկել զուգարանում եղած աշակերտների թիվը:
- Ձուգարաններում հարատև հավոդ մակերևույթները կախտահանվեն, հավաքարարի կողմից, օրական 3 անգամ «Առավոտյան ցոլ» ախտահանիչ նյութով, իսկ շաբաթը մեկ անգամ՝ ախտահանիչ հատուկ նյութով:

Գլխավոր գրասենյակ

- Գլխավոր գրասենյակի էլքն ու մուտքը սահմանափակելու համար, երեխաները կմտնեն գրասենյակ միայն բուժքրոջը տեսնելու համար:
- Ադմինիստրատորների, խորհրդատուների և գրասենյակի անձնակազմի հետ շփվելիս կհանդիպեն բացօդյա վայրում ֆիզիկական հեռավորություն պահպանելու համար: Այն աշակերտները, ովքեր ցանկանում են հանդիպել գրասենյակում, պետք է ժամադրություն վերցնեն առցանց հանդիպելու կամ նշանակված վայրում հանդիպելու համար:
- Գրասենյակ այցելելիս ծնողներին պետք է ժամադրություն վերցնել:
- Յանկացած շփում գրասենյակի աշխատակիցների հետ, ներառելով երեխային դասերից շուտ տուն տանելու ընթացքում, պետք է նախապես զանգահարել կամ էլեկտրոնային նամակ ուղարկել:
- Հաճախման կամ բժշկի կողմից տրված փաստաթղթերը պետք է էլեկտրոնային նամակով ուղարկել համապատասխան անձանց և ոչ թե դպրոց բերել անձամբ:

Առողջական նախազգուշացումներ

- Եթե աշակերտը դպրոցում եղած ժամանակ ցուցաբերի Կորոնավիրուսի հնարավոր մեկ կամ մի քանի ախտանշաններ, նրան կմեկուսացնենք, կզանգահարենք ծնողներին, ով իր հերթին պետք է երեխային տուն տանի 30 րոպե ընթացքում: 100.4° Ֆերիինհայթ ջերմությունը համարվում է բարձր, դրա հետևանքով այն համարվում է նաև ախտանշան:
- Եթե երեխային տուն են ուղարկել հնարավոր Կորոնավիրուսի ախտանշաններով, ապա ծնողը կամ պահապանը պետք է երեխային բժշկի տանի և կատարի այլ քննություններ, ինչպես նաև Կորոնավիրուսի քննություն: **Աշակերտները չեն կարող վերադառնալ դպրոց, եթե չեն համապատասխանում Լուս Անջելեսի գավառի պահանջներին:**
- Եթե երեխան շփվել է հաստատված հիվանդ անձի հետ, նրան պետք է տուն ուղարկել: Ծնողը կամ պահապանը պետք է երեխային տանի Կորոնավիրուսի քննություն հանձնելու: Հիվանդ անձի հետ շփվելուց հետո երեխան պետք է մեկուսանա 14 օրվա ընթացքում:

Հաղորդագրություններ

- Տարբեր առիթների միջոցով, ծնողները և աշակերտները կծանոթանան այս փաստաթղթի տեղեկությունների հետ, որոնցից են տեսաժապավենները, տեղեկատու թերթերը, էլեկտրոնային փոստով ստացված նամակները, հեռախոսազանգերը և այլն:
- Դպրոց վերադառնալուց առաջ, աշակերտները պետք է ծանոթանան այս տեղեկություն հետ: